

ԱՆՏՈՒՄԱՅԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԻՋ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ՋԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՂ

Մ. Ռ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Բնակչության քանակական, որակական, կառուցվածքային և տարածքային տեղաշարժը, ինչպես նաև նրա նյութական բարեկեցության և հոգեկան կյանքի փոփոխությունները, սերտորեն կապված լինելով երկրում իրականացվող բարեփոխումների հետ, վերջիններիս համար հանդես են գալիս թե՛ որպես նախադրյալ և թե՛ որպես հետևանք: Այդ պատճառով շատ կարևոր է ճիշտ պատկերացում ունենալ երկրում կատարվող գործընթացների մասին, և, որ ավելի կարևոր է, կարողանալ ժամանակին բացահայտել վերջիններիս բացասական միտումները:

Ըստ պաշտոնական վիճակագրական աղբյուրների՝ 1989 թ. և 1994-2000 թթ. հանրապետության բնակչության թվաքանակը և տարիքային կազմը եղել է այսպիսին.

Աղյուսակ 1՝

Տարեթիվը	Ընդամենը բնակչություն (հազարներով)	Բնակչության բաշխումը ըստ տարիքային խմբերի (տոկոսներով)		
		մինչև 15 տարեկան	15-60 տարեկան	60 և բարձր տարեկան
1989թ. (մարդահամար)	3304.8	30.3	60.4	9.3
1994թ.	3740.2	29.6	59.2	11.2
1995թ.	3753.5	29	58.6	11.2
1996թ.	3766.4	28.2	60,0	11,8
1997թ.	3780.7	27.4	60.5	12.1
1998թ.	3793.2	27.2	57.0	15.3
1999թ.	3798.2	25.4	61.7	12.9
2000թ.	3803.4	24.2	62.4	13.4

Ինչպես տեսնում ենք աղյուսակում բերված տվյալներից, տեղի է ունեցել ՀՀ բնակչության աճ՝ 1989 թ. այն կազմում էր 3304.8 հազար մարդ, իսկ 2000 թ.՝ 3803.4 հազար մարդ: Ակնհայտ է, որ վերջին թիվը չի վերաբերում առկա բնակչությանը, այլ ցույց է տալիս միայն ՀՀ քաղաքացի համարվող բնակչության թիվը: Ըստ տարիքային խմբերի՝ բնակչության բաշխման տվյալները վկայում են, որ 1989-2000 թթ. ընթացքում նվազել է մինչև 15 տարեկանների թիվը, որը տրևատեսական և հոգեբանական գործոնների ազդեցությամբ պայմանավորված՝ բնակչության բնական աճի նվազեցման հետևանք է, իսկ 60 և բարձր տարեկանների թիվը աճել է: 15-ից-60 տարեկան խմբի մեջ ամենամեծ քանակական նվա-

¹ Տվյալները վերցրած են ՀՀ վիճակագրության ազգային ծառայության 1994-2000 թթ. տարեկան զեկույցներից:

գումը, ինչպես նաև 60-ից բարձր տարեկանների խմբի մեջ ամենամեծ քանակական աճը տեղի է ունեցել 1998 թ.-ին, որի պատճառներից մեկը, մեր կարծիքով, այդ ժամանակ երկրում տեղի ունեցած քաղաքական և որպես դրա հետևանք՝ տնտեսական գործընթացներն են՝ ՀՀ նախագահի հրաժարականը, ՀՀՕ ղեկավար դիրքի զիջումը, լարված քաղաքական և տնտեսական իրավիճակը, որոնք էլ բերեցին վաղվա օրվա նկատմամբ անվստահության: Այդ անվստահությունը մարդկանց մեջ ուժեղացրեց հեռավոր երկներ մեկնելու ցանկությունը:

Ինչպես հայտնի է, բնակչության թվաքանակի և կառուցվածքի փոփոխությունները պայմանավորված են երկու խումբ գործոններով՝ բնական աճով և միգրացիոն հոսքերով:

Ըստ պաշտոնական վիճակագրության² հանրապետության բնակչության բնական աճի ցուցանիշները 1989-2000 թթ. բնութագրվում են հետևյալ կերպ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2²

Տարեթիվը	Ծնվածների թիվը		Մահացածների թիվը		Բնական աճը	
	մարդ	տոկոս	մարդ	տոկոս	մարդ	տոկոս
1989	75250	100.0	20853	100.0	54397	100.0
1990	79882	106.2	21993	105.5	57889	106.4
1991	77825	103.4	23425	112.3	54400	100.0
1992	70581	93.8	25825	123.8	44757	82.3
1993	59041	79.0	27500	131.9	31541	58.0
1994	51143	68.0	24652	118.3	26491	48.7
1995	48960	65.1	24842	119.1	24118	44.3
1996	48134	64.0	24936	119.6	23198	42.6
1997	43929	58.4	23985	115.0	19944	36.7
1998	39775	52.8	23210	115.5	16156	28.8
1999	36558	48.6	24091	115.5	12467	22.9
2000թ. ³ (9 ամիս)	25643	-	17493	-	8150	-

Ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, ծնելիության մակարդակի նվազման և մահացության աճի միտումները վերջին 4-5 տարիների ընթացքում չնայած չեն դադարել գործելուց, սակայն համեմատաբար մեղմացել են: 1995-1999 թթ. ծնվածների միջին տարեկան թիվը հանրապետությունում կազմել է 43.4 հազ., մահացածների թիվը՝ 24.2 հազ., բնական աճը՝ 19.2 հազ. մարդ:

Ներկայումս հանրապետությունում ծննդաբեր հասակի 100 կանանց (15-49 տարեկան) ընկնում է 130 ծնված՝ 215-ի փոխարեն, որն անհրաժեշտ է սերունդների քանակական հավասարության համար: Քանի որ երեխա ունեցողները մեծ մասամբ ամուսնացած կանայք են (75%), ծնելիության մակարդակի նվազումը կարելի է նույնպես բացատրել ամուսնությունների նվազմամբ. 1990 թ. սկզբից մինչև 1997 թ. ամուսնությունների թիվը պակասել է 50%-ով: Դրան նպաստել են միգրացիան, ծանր սոցիալ-տնտեսական վիճակը: Ավելացել է նաև միայնակ մայրերի քանակը, որի պատճառներից մեկը, մեր կարծիքով, նպաստ ստանալու ձգտումն է:

Մահացության մակարդակի աճը մեծ մասամբ կապված է սոցիալական խնդիրների հետ՝ վճարովի բժշկական ծառայությունների, ծանր սոցիալ-տրնտեսական պայմանների, ծանր հոգեկան վիճակի հետ: Վարակիչ հիվանդություններից, ինքնասպանություններից, սպանություններից, դժբախտ պատահարներից:

² Տվյալները վերցրած են ՀՀ վիճակագրության ազգային ծառայության 1989-2000 թթ. տարեկան զեկույցներից:

³ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-սեպտեմբերին, ՀՀ վիճակագրության ազգային ծառայություն, Երևան, 2000, էջ 113:

⁴ Տե՛ս UNICEF, Save the Children, Government of RA- "A Situation Analysis of children and women in Armenia, Yerevan, 1999:

հարձերից մահացածների թիվը նույնպես աճել է: Բնակչության բնական աճի տեմպերի նվազմանը նպաստել է նաև պատերազմական վիճակը, որը պատճառ դարձավ երկրից հատկապես երիտասարդների զանգվածային արտահոսքի համար:

Բնակչության իրական և պաշտոնական թվաքանակների ու տարիքային կառուցվածքների միջև անհամապատասխանությունը պատճառաբանվում է բնակչության շրջանում միգրացիոն գործընթացով, որի տեմպերը ուղիղ համեմատական են հանրապետությունում տեղի ունեցող քաղաքական և տնտեսական գործընթացներին: Անցումային տարիներին Հայաստանում ընթացող միգրացիոն գործընթացները խորը ազդեցություն են թողել ոչ միայն բնակչության թվաքանակի, այլև սեռատարիքային, մասնագիտական, կրթական կառուցվածքների վրա, քանի որ տեղաշարժվող բնակչության կազմը էականորեն տարբերվում է ընդհանուր բնակչության կառուցվածքային ցուցանիշներից:


Ընդ որում, հարկ ենք համարում նշել, որ միգրացիոն գործընթացների վերաբերյալ հավաստի վիճակագրական տեղեկատվության բացակայության պատճառով մեր մոտեցումները ունեն միայն գնահատականների ու եզրակացությունների բնույթ:

1990 թ. սկզբին արտագաղթի ցուցանիշները մոտ էին օդային փոխադրումների մեկնումների և ժամանումների տարբերությանը, քանի որ Հայաստանը գտնվում էր տրանսպորտային շրջափակման մեջ և այլ երկրներ կամ Խորհրդային Միության նախկին հանրապետություններ կարելի էր մեկնել հիմնականում օդային տրանսպորտով: Հետագայում արտագաղթը օդային տրանսպորտով նվազեց, քանի որ ավելացավ տրանսպորտի այլ տեսակներով արտագաղթելու հնարավորությունը, իսկ բնակչությունը գերադասում է օգտը վել ավելի էժան փոխադրամիջոցներից:

Հանրապետությունից 1992-2000 թթ. արտագաղթածների վերաբերյալ ՀՀ ավիացիայի գլխավոր վարչության կողմից վիճակագրության նախարարությանը տրամադրված տվյալները ամփոփված են գրաֆիկում⁵:

Հանրապետությունից մեկնողների և ժամանողների դինամիկան 1992-2000 թթ.

Գրաֆիկ



⁵ «Արմկոնսալտգրուպ» ՓԲԸ - «Թաքնված զբաղվածությունը և քողարկված գործազրկությունը ՀՀ-ում և նրանց ծավալների նվազեցման ուղիները», Երևան, 2000, էջ 62:

Ինչպես տեսնում ենք, այս բնագավառում ևս նկատվում է բացասական գործընթացների նվազման միտում՝ առաջին 4 տարիների ընթացքում արտագաղթածների թիվը մոտ 6 անգամ գերազանցում է վերջին 4 տարիներին արտագաղթածների թվին: Սակայն 2000 թվականի համար նկատվում է այդ գործընթացի բացասական ան:

Այնուհանդերձ, 1992-1998 թթ. ընթացքում հանրապետությունից արտագաղթել է մոտավորապես 780 հազար մարդ կամ ընդհանուր բնակչության 20%-ը: Նրանց մեծ մասը մեկնել է վերջին տարիներին: Հետևաբար, Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը 1998 թ. սկզբին իրականում կարող էր լինել մոտավորապես 3 միլիոնից մինչև 3 միլիոն 100 հազար մարդ: Հաշվի առնելով վերջին տարիներին հանրապետությունը լքածների թիվը՝ 500-700 հազար մարդ, մենք հանգում ենք ՀՀ բնակչության հետևյալ թվին՝ 2300-2500 մարդ: Իսկ հաշվի առնելով նաև ավտոբուսներով եւ տրանսպորտի այլ միջոցներով Հայաստանը լքածներին՝ կտանաճը ավելի մեծ թիվ, այն է՝ 1300 հազար մարդ, այսինքն՝ բնակչության 34 %-ը, կամ 1/3-ից ավելին բացակայում են հանրապետությունից: Այսպիսի արդյունք չի ունեցել անգամ 1939-1945 թթ. պատերազմում պարտված Գերմանիան: Գերմանիան այդ ժամանակ կորցրել էր իր բնակչության մոտավորապես 12%-ը:

Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությանը բնորոշ բնակչության հսկայածավալ միգրացիան կամ նրա զանգվածային արտագաղթը հիմնականում տեղի են ունենում որակական մասի հաշվին: «Ուղեղների արտահոսքը» պայմանավորված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հանգամանքներով: Վերջին տարիներին երկրում տեղի ունեցած վերափոխումների հետևանքով խիստ փոխվել է տնտեսության ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ ճյուղային կառուցվածքը, ըստ այդմ՝ համապատասխան աշխատանքային ռեսուրսների պահանջարկը:

1999 թ. պետական բյուջեի փաստացի կատարման տվյալներով կրթության և գիտության վրա ծախսվել է պետական բյուջեի ծախսերի 9.3 %, որը կազմում է ՀՀ ՀՆԱ 2.3 %-ը: Միևնույն ժամանակում երկրների փորձը ցույց է տալիս, որ միայն այդ բնագավառում պահանջվում է օգտագործել ազգային արդյունքի շուրջ 5 %-ը: Հարցը չի վերաբերվում միայն տնտեսության մյուս ճյուղերի համեմատությամբ կրթության և գիտության աշխատողների աշխատավարձերի ցածր լինելուն: Այդ բնագավառների նկատմամբ անուշադրությունը հանգեցրեց գիտական մտքի արտահոսքի, իսկ կրթության բնագավառը զգալիորեն կազմալուծվեց: Հանրապետությունում աշխատանքի վարձատրման անբավարար մակարդակը նույնպես նպաստեց, որ բարձր գիտական որակավորում և փորձառություն ունեցող շատ մասնագետներ լքեն իրենց երկիրը՝ աշխատանք գտնելով արտասահմանում:

Բնակչության հասակային կառուցվածքի մեջ 1997 թ. համեմատությամբ 1998 թ.-ին տեղի են ունեցել հետևյալ փոփոխությունները. 0.2 տոկոսով պակասել է երեխաների տեսակարար կշիռը, և հակառակը՝ 3.7 %-ով ավելացել է կենսաթոշակային հասակ (60 և ավելի տարեկան) ունեցողների թիվը:

Բնակչության կազմում երեխաների թվաքանակի փոքրացման պատճառները մեկնաբանելու համար դիտարկենք աղյուսակ 2:

Կարելի է արձանագրել, որ տեղի է ունեցել ծնունդների բացարձակ թվի նվազում՝ 51.4 %: Եթե այդ ցուցանիշը համեմատենք Հայաստանի բնակչության ընդհանուր թվաքանակի նկատմամբ արտագաղթածների թվի հետ՝ 20.0 %, ապա կարող ենք անել հետևյալ եզրակացությունները.

1. Երեխաների թվաքանակի նվազման առաջին և զլխավոր պատճառը ծնելիության նվազումն է, որը վկայում է կենսապայմանների կտրուկ վատթարացման նկատմամբ ընտանիքների դրսևորած յուրատեսակ պաշտպանական ռեակցիայի մասին:

2. Երեխաների թվաքանակի նվազման երկրորդ պատճառն, անշուշտ, բնակչության մի ստվար հատվածի արտագաղթն է երկրից:

3. Երիտասարդները, ապագայի հանդեպ վստահություն չունենալով, ընտանիք չեն կազմում:

Երիտասարդ մարդկանց լիարժեք կյանք մտնելու նախապայմաններից մեկը, ինչպես հայտնի է, կրթությունն է ու մասնագիտության ձեռքբերումը:

Նվազել է 7-24 տարեկան տարիքի բնակչության ուսումնական հաստատություններում ընդգրկվածության մակարդակը՝ եթե 1989 թ.-ին այն կազմել է 66 %, ապա 2000 թ. այն դարձել է 44.2 %:

Հանրապետության բնակչության տարիքային կառուցվածքում տեղի ունեցած հաջորդ կարևոր փոփոխությունը աշխատունակ հասակի մարդկանց տեսակարար կշռի նվազումն է՝ 3.5 %, ինչը կտրուկ բարձրացրել է նրանց խնամառուներով (երեխաներ ու ծերեր) ծանրաբեռնվածության մակարդակը: Հաշվի առնենք նաև, որ մեկնողների 59.5 %-ը տղամարդիկ են, իսկ 74 %-ը՝ աշխատունակ տարիքի գործունյա մարդիկ:

Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ ՀՀ վիճակագրության նախարարության՝ 1996 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացրած տնային տնտեսությունների հետազոտության նյութերի համաձայն՝ ուսումնասիրված յուրաքանչյուր 5 հոգուց միայն երկուսն են եղել տնտեսապես ակտիվ, իսկ սոցիալական բեռնվածության գործակիցը տնտեսապես ակտիվ մեկ մարդու հաշվով կազմել է 1.55:

Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ ոչ աշխատանքային հասակ ունեցող մարդկանց թիվը 1989 թ. համեմատությամբ 1998 թ.-ին բարձրացել է 3.7 %-ով և կազմել է 15.3 %:

Բնակչության «ծերացման» մասին վկայող այդ փոփոխությունը տեղի է ունեցել ոչ թե կենսամակարդակի բարձրացման, մարդկանց առողջական վիճակի բարելավման, մահացության նվազման և կյանքի միջին տևողության երկարացման, այլ ընդհակառակը՝ իրար հետ փոխկապակցված բոլոր նշված բնագավառներում ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով:

Այլ կերպ ասած՝ տեղի է ունեցել ոչ թե բնակչության՝ դասական իմաստով «ծերացման» գործընթաց, այլ բնակչության յուրատիպ երիտասարդագրկում (ծնունդների շեշտակի կրճատում, ակտիվ տարիքի բնակչության արտագաղթ):

Բարձր գործազրկության տնտեսական ու սոցիալական արժեքը, որն արտահայտվում է պարապորդով, եկամտի կորուստով, շարունակում է հետապնդող էլ հանրապետության տնտեսությանը՝ սպառնալով նույնիսկ բարեփոխումների արդյունավետությանը: Իրոք, գործազրկությունը մնում է հանրապետության իշխանությունների ամենամեծ մտահոգությունը:

Այժմ դիտարկենք ՀՀ բնակչության աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը: Ի դեպ նշենք, որ ստորև բերված տվյալները պաշտոնական են և հիմնված են ՀՀ քաղաքացի համարվող բնակչության թվի վրա:

Միայն հանրապետության տնտեսական ինքնուրույնության 7-րդ տարում հաջողվեց նվազեցնել գործազրկության մակարդակը: 1998 թ.-ի հունվար ամսվա համեմատությամբ 1999 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ այն նվազել է 2.2 %-ով և կազմել 8.9 %: Իսկ ինչ վերաբերում է 2000 թ.-ին⁶, ապա գործազուրկների

⁶ Տվյալները վերցրած են ՀՀ վիճակագրության ազգային ծառայության 1989-2000 թթ. տարեկան զեկույցներից:

⁷ Տե՛ս DGIA, NIS/Tacis, Հայաստան. Տնտեսական միտումներ, Ռուլիս-սեպտեմբեր, 2000 թ., Երևան, 2000, էջ 120:

⁸ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին», ՀՀ վիճակագրության ազգային ծառայություն, Երևան, 2000, էջ 7:

տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության մեջ կազմում է 12.1%՝ 1999 թ.-ի 10.4%-ի դիմաց (տե՛ս աղյուսակ 3): Սակայն այս տվյալները չեն արտացոլում գործազուրկների իրական մեծությունը: Այս հիմնախնդիրն առանձին ուսումնասիրության առարկա է:

**ՀՀ բնակչության և աշխատանքային ռեսուրսների կառուցվածքը՝
01.04.2000թ. դրությամբ (հազ. մարդ)**

Աղյուսակ 3

Բնակչություն 3804,6 (100%)			
Աշխատանքային տարիքից ցածր 1042,5 (27.4%)	Աշխատանքային տարիքի՝ 2343,6 (81.6%)		Աշխատանքային տարիքից բարձր 418,5 (11%)
Աշխատանքային ռեսուրսներ՝ 2252,2 (96.1%)		Անաշխատունակներ (I և II կարգի հաշմանդամներ, անկողնուց զամրակվածներ և այլն) 91,4 (3.9%)	
Տնտեսապես ակտիվ բնակչություն (աշխատուժ) 1468,4 (65.2%)		Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն 783,8 (34.8%)	
Չբաղվածներ 1290,7 (87.9%)	Գործազուրկներ 177,7 (12.1%)		

2000 թ. զբաղված բնակչության 71.6%-ը զբաղված է մասնավոր հատվածում, 27.4%-ը՝ պետական հատվածում և կառավարման համակարգում, 1.0%-ը՝ հասարակական և կրոնական կազմակերպություններում և հիմնադրամներում:

Տարածաշրջանային տեսանկյունից գործազուրկ բնակչության գերակշռող մասը (95.0%) կենտրոնացված է քաղաքային բնակավայրերում, նրանցից 30%-ը՝ Երևան, 16.1%՝ Գյումրի-և 8.1%-ը՝ Վանաձոր քաղաքներում¹⁰:

Տարիքային տեսանկյունից մեծ է հատկապես 30-50 տարեկան գործազուրկների տեսակարար կշիռը (61.1%): Նշենք, որ սա այն տարիքն է, որի դեպքում աշխատանքային ռեսուրսները պակաս ճկուն են աշխատուժի շուկայի փոփոխությունների նկատմամբ:

Իսկ կրթական կազմի վերաբերյալ տվյալները վկայում են ընդհանուր միջնակարգ կրթությամբ գործազուրկների գերակայության մասին (տե՛ս աղյուսակ 4):

Պետք է նշել նաև, որ տնտեսության մեջ զբաղվածների մասն են կազմում միջնակարգ մասնագիտական, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները (թեև նրանք աշխատուժի մեջ չեն և համարվում են բնակչության տնտեսապես ոչ ակտիվ մաս): Սա պայմանավորված է մի կողմից՝ սոցիալական հանգամանքներով (մասնավորապես՝ կրթավճար), մյուս կողմից՝ աշխատուժի շուկայում 18-25 տարեկանների համեմատաբար բարձր պահանջարկով:

⁹ «Արմկոնսալտգրուպ» ՓԲԸ- «Թաքնված զբաղվածությունը և քողարկված գործազուրկությունը ՀՀ-ում և նրանց ծավալների նվազեցման ուղիները», Երևան, 2000, էջ 20:

¹⁰ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-մարտին», ՀՀ վիճակագրության ազգային ծառայություն, Երևան, 2000 թ., էջ 69:

Գործազուրկների տարիքային և կրթական կազմի վերաբերյալ տվյալներն ըստ սեռի՝ 2000 թ. հունիսի դրությամբ (%-ով)

Աղյուսակ 4

	Գործազուրկների թվաքանակը ընդհանուրի նկատմամբ	
	Ընդամենը	Կանայք
Ընդամենը գործազուրկներ	100	100
<i>այդ թվում տարեկան.</i>		
մինչև 18	0.9	0.8
18-21	7.6	7.6
22-29	21.6	21.5
30-50	61.1	62.7
50-բարձր	8.8	7.4
<i>կրթությամբ</i>		
բարձրագույն	11.4	10.9
միջնակարգ մասնագիտական	23.0	22.7
ընդհանուր միջնակարգ	58.6	60.5
թերի միջնակարգ	7.0	5.9

Հանրապետությունում երկարատև գործազուրկները (մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողները) կազմում են ամբողջ գործազուրկների թվի 75%-ը, որոնց մեծ մասը (80%) մինչև 50 տարեկան են և չեն աշխատում 1992 թ.-ից ի վեր, կորցրել են իրենց որակավորումը, հմտությունը և աշխատանքի շուկայում դարձել անմրցունակ: Ավելի դժվար է կանանց աշխատանքի տեղավորման խնդիրը. գործազուրկ կանանց շուրջ 85%-ը երկարատև գործազուրկներ են:

Ծատ ավելի հիվանդագին է առաջին անգամ աշխատանք փնտրողների աշխատանքի տեղավորման հարցը (այն կազմում է գործազուրկների թվի 23%-ը), քանի որ գործատուների կողմից շատ հաճախ մերժվում են փորձ և հմտություն չունենալու պատճառով: Նրանց մուտքը գործունեության բնագավառ վտանգված է նաև այն պատճառով, որ նոր ստեղծված աշխատատեղերի թվաքանակի տեմպերը ետ են մնում աշխատանքային տարիք մուտք գործող երիտասարդների թվաքանակից: Եթե դրան էլ ավելացնենք կենսաթոշակային օրենսդրությամբ նախատեսված տարիքային աշխատանքային կենսաթոշակի անցնելու իրավունք տվող տարիքի բարձրացումը, ապա պարզ կլինի երիտասարդների աշխատանքի տեղավորման բարդությունը: Ի լրումն դրան, հանրապետության տնտեսության տարբեր բնագավառներում, մասնավորապես բյուջետային ոլորտում, զբաղված են շուրջ 60.0-70.0 հազար կենսաթոշակատուներ և կենսաթոշակային տարիքի հասած անձինք¹²:

Հանրապետությունում լուրջ անելիքներ կան գործատուների կողմից աշխատուժի նկատմամբ պահանջարկը որակյալ մասնագետներով արագ համալրելու հարցում: Այդ է պատճառը, որ զբաղվածության ծառայության ուղեգրերով գործատուների մոտ գործազուրկներին աշխատանքի տեղավորման միջնորդությունները շատ հաճախ մերժվում են: Միայն 1998 թ. ընթացքում միջին հաշվով ցանկացած ազատ մեկ աշխատատեղի պահանջարկը աշխատուժի համալրելու համար գործատուների մոտ ուղեգրերով գործուղված 4-5 գործա-

¹¹ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թ. հունվար-հունիսին», ՀՀ վիճակագրության ազգային ծառայություն, Երևան, 2000, էջ 62:

¹² Ըստ ՀՀ աշխատանքի և զբաղվածության հանրապետական ծառայության տվյալների:

գուրկից աշխատանքի է տեղավորվել միայն մեկը: Ի հավելումն ասվածի, մերժումը հիմնականում պատճառաբանվում է գործազուրկների մասնագիտական անհամապատասխանությամբ ազատ աշխատատեղերին ներկայացվող պահանջներին և ցածր մասնագիտական պատրաստվածությամբ: Այսինքն՝ անհրաժեշտ է աշխատուժը հարմարեցնել ազատ աշխատատեղերին և ոչ թե հակառակը:

Անհրաժեշտ է իրականացնել գործազուրկ անձանց վերամասնագիտացում և որակավորման բարձրացում՝ կազմակերպելով մասնագիտական ուսուցումներ պահանջարկ վայելող մասնագիտությունների ուղղությամբ: Վերոհիշյալ քաղաքականությունը պետք է ընդլայնվի տնտեսության ճյուղային կառուցվածքի և համապատասխանաբար աշխատանքային ռեսուրսների նկատմամբ ձևավորվող պահանջարկից ելնելով: Բոլոր դեպքերում բարձր որակավորում ունեցող գործազուրկները աշխատանքի են տեղավորվում կարճ ժամկետում և առանց դժվարությունների:

Հանրապետությունում զբաղվածության պաշտոնական ցուցանիշները չեն արտացոլում իրական վիճակը. այն փաստացի ավելի բարձր է, քանի որ գոյություն ունի չգրանցված զբաղվածություն: Ընտրանքային եղանակով դիտարկումները ցույց են տալիս, որ այս ոլորտում զբաղվածների թիվը կազմում է 100-120 հազար մարդ: Ի դեպ, նրանց որոշ մասը հաշվառված են որպես գործազուրկ: Այս վիճակի հիմնական պատճառներից են անձնական սոցիալական ապահովագրության պարտադիր համակարգի բացակայությունը: Զբաղվածությունը համակարգելու կարևոր գործոն է գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության իրականացմանը: Սակայն վերջին յոթ տարիների փորձը ցույց տվեց, որ ոչ բոլոր գործատուներն են կատարում բնակչության զբաղվածության մասին օրենսդրությամբ սահմանված իրենց պարտականությունները: Այսպես, գործատուների մի մասը խուսափում է տեղեկություններ տալ զբաղվածության ծառայությանը թափուր աշխատատեղերի և աշխատողների հնարավոր զանգվածային ազատումների մասին, սահմանված կարգով զբաղվածության հիմնադրամին չեն կատարում փոխանցումներ՝ իրենց կամքից անկախ պատճառներով աշխատանքից ազատումների դեպքում, չեն պահպանում սահմանված քվոտաներին համապատասխան հաշմանդամներին աշխատանքի տեղավորման պարտականությունը, երբեմն անհիմն, առանց պատճառաբանության մերժում են գործազուրկներին աշխատանքի տեղավորման հարցում: Ավելին՝ գործատուները համատարած խախտում են աշխատանքային օրենսդրության պահանջները՝ աշխատանքի ընդունման, աշխատանքից ազատման և վարձատրման հարցերում: 1996-1998 թթ. զբաղվածության ծառայության ուղեգրերով աշխատանքի տեղավորվածների թիվը կազմում է հանրապետությունում աշխատանքի ընդհանուր տեղավորվածների մոտ 35%-ը:

Գործազուրկներին աշխատանքի տեղավորման գործուն միջոց է զբաղմունքի միջազգային դասակարգիչների առկայությունը: Սակայն այսօր հանրապետությունում գործում են տարիֆա-որակավորման տեղեկատուները, որոնք չեն արտացոլում աշխատաշուկայում և գործունեության ոլորտում կատարվող փոփոխությունները:

Բնակչության և աշխատանքային ռեսուրսների կանոնավոր վերարտադրությանը, որը տնտեսական անվտանգության երկրորդ կարևոր բաղադրիչն է¹³, կործանարար հարված է հասցվել անցած տարիներին. և այն վերականգնելու համար անհրաժեշտ են երկարաժամկետ ծրագրեր և համալիր միջոցառումներ, որոնք պետք է ներառեն նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության

¹³ Տե՛ս Հ. Բ. Ղուշչյան, ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 2001, թիվ 3, էջ 19:

սոցիալական պաշտպանության համակարգի բարելավման, բնակչության նվազագույն կենսամիջոցների ապահովման և այլ խնդիրներ:

Հանրապետության գիտական և տնտեսական կյանքի վրա բացասաբար է անդրադառնում տաղանդավոր գիտնականների, մշակույթի գործիչների արտագաղթը: Միգրացիոն բնակչության կազմում զնալով աճում է նաև տեխնիկական կրթությամբ բանվորների, մեներգների, շինարարների թիվը: Ուստի ներկա պայմաններում անհրաժեշտ է իրականացնել քաղաքացիների արտագնա աշխատանքային գործունեության պետական կարգավորում:

Կատարելով ներդրումներ մարդկային կապիտալի ոլորտում՝ Հայաստանում կարելի է ստանալ բարձր արդյունք ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ոլորտներում: Եվ հակառակը, եթե չկատարվեն լուրջ ներդրումներ մարդկային կապիտալի կամ սոցիալական պաշտպանության համակարգի կատարելագործման ու բարելավման մեջ, կարող ենք հանգել շատ լուրջ բնույթի բացասական տնտեսական հետևանքների:

Մ. Ր. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ — *К вопросу о структуре и занятости населения Республики Армения в переходный период.*— За годы реформ население РА претерпело очень глубокие изменения по возрастному и половому признакам, что отражено в таблице 1 (1989 г. и 1994-2000 гг.). Естественный прирост населения упал настолько, что не обеспечивается даже простое воспроизводство (табл. 2). Уменьшению численности населения способствовала также достигшая катастрофических размеров миграция, динамика которой отражена на графике 1 (отрицательное сальдо составляет 671 тыс.чел.) Так как из республики эмигрировали люди трудоспособного возраста, квалифицированные специалисты, структура населения стала «старой» и неготовой к быстрым сменам специальностей. Безработица стала затяжной и имеет характерную для Армении структуру (таблица 4). Вышесказанное означает, что необходимы радикальные меры, серьезные государственные программы, направленные на обеспечение нормального воспроизводства населения и рабочей силы. В противном случае описанные процессы примут необратимый и неконтролируемый характер.